
Հայ Յեղափոխական Դաւակացության առաջարկած փոփոխությունները

**Հայաստանի Հանրապետության
և Թուրքիայի Հանրապետության
միջև 2009թ. օգոստոսի 31-ին
նախասնագրված
արձանագրություններում**

2009

Երևան

Նախ՝ մեկ հաստառում.ՀՅ Դաշնակցությունը դեմ չէ և երբեք էլ դեմ չի եղել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բնականնացմանը: Բայց՝ hrnf առանց նախադայնանների՝ միջազգային իրավունքի սահմաններում: Մենք բազմիցս հայտարարել ենք այս մասին՝ հիանալի գիտակցելով, որ 21-րդ դարում փակ սահմանը աննորմալ երևոյթ է: Սա հասուկ նույն ենք ի դասախան ներքին ու արտաքին քարոզամիջոցների այն կեղծարարության, թե իր Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ընդհանրապես դեմ է Թուրքիայի հետ որևէ հարաբերության, դեմ է սահմանի բացմանը:

**ա) Հայաստանի Հանրապետության և
Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ
հարաբերությունների զարգացման մասին արձանագրություն**

**ա 1. Վերնագրում «զարգացման» բառը փոխարինել «բարելավ-
ման» բառով:**

Պարզաբանում. Փոփոխությունը խմբագրական է: Գտնում ենք,
որ իրավական հարաբերությունների չգոյության պարագայում
ճիշտ չէ խոսել «զարգացման» մասին: «Բարելավում» եզրը բա-
վարար է:

**ա 2. Տեսի 4-րդ դարձեռության «որոշելով» բառից հետո ավելաց-
նել «առանց նախադայմանների» բառակապակցությունը: «Զար-
գացման» բառը փոխարինել «բարելավման» բառով:**

Տերպային դարձերակ. Որոշելով զարգացնել և խորացնել
իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքական, տնտեսա-
կան, էներգետիկ, տրանսպորտի, մշակույթի, գիտական, տեխ-
նիկական և այլ ոլորտներում՝ հիմնվելով երկու երկրների
ընդհանուր շահերի վրա:

Առաջարկվող տարբերակ. Որոշելով **առանց նախադայմանների
բարելավել** և խորացնել իրենց երկկողմ հարաբերությունները
քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, մշա-
կույթի, գիտական, տեխնիկական և այլ ոլորտներում՝ հիմնվելով
երկու երկրների ընդհանուր շահերի վրա:

Պարզաբանում. Հարաբերությունների կարգավորման փորձի
ամրող ընթացքում Հայաստանը միշտ պնդել է, որ գնում է բարե-
լավման առանց նախապայմանների: Այս դրույթը ամրագրված է
նաև ՀՀ Ազգային անվտանգության հայեցակարգում: Թուրքա-
կան կողմը երբեք պաշտոնապես չի ասել, թե Հայաստանը ճիշտ
չէ, մենք նախապայմաններ ունենք: Թեև իրապարակային հայ-
տարարություններով Թուրքիայի առաջնորդները անընդհատ
փորձել են հարաբերությունները պայմանավորել այլ՝ դարաբադ-
յան խնդրի հանգուցալուծման բնույթով: Եթե իրոք մենք գնում
ենք կարգավորման առանց նախապայմանների, ապա որևէ
պատճառ չկա, որ այդ բառակապակցությունը տեքստի մեջ չի-
նի: Հայաստանը պարտավոր է պնդել այս առաջարկը:

Միջանկյալ նշենք, որ «առանց նախադաշտմանների» բառերը, ցավոք, չկային նաև 2009թ. ապրիլի 23-ի Հայաստանի Հանրապետության, Թուրքիայի Հանրապետության և Շվեյցարիայի արտաքին գերատեսչությունների համատեղ հայտարության մեջ, թեև ԱՄՆ ԱԳՆ-ի հաջորդ օրվա արձագանքի մեջ հատուկ նշված էր, որ իրենք կողմ են առանց նախապայմանների հարաբերությունների հաստատմանը:

ա 3. Տեսության 11-րդ դարբերությունը վերաշարադրել հետևյալ կերպ. «իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսություն»:

Տեքստային դարբերակ. Իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարբության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար:

Առաջարկվող տարբերակ. Իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսություն:

Պարզաբանում. Որ երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված քայլեր անհարաժեշտ են, ոչ ոք չի ժխտում: Բայց եթք փորձ է արվում խնդիրը տեղափոխել պատմական հարբություն և մասնագետների միջոցով իբր գիտական անկողմնանակալ ուսումնասիրության նյութ դարձնել պատմական փաստաթղթերն ու արխիվները՝ գոյություն ունեցող խնդիրների ու առաջարկների ձևակերպման համար, ապա ակնհայտորեն Թուրքիան հանրապետություն է ստանում քննության նյութ դարձնել Ցեղասպանության հարցը: Այստեղ արդեն վաստ քողարկված նախապայման կա: Եթե նույնիսկ Թուրքիան առաջարկի քննարկել հարցը, իսկ հայկական կողմը մերժի, միևնույն է Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը դուրս է գալու այլ երկրների ու կազմակերպությունների օրակարգից: Մինչդեռ ՀՀ Ազգային անվտանգության հայեցակարգում ամրագրված է. «Հետամու լինելով Հայոց ցեղասպանության համընդիանուր, մասնավորապես Թուրքիայի կողմից ճանաչմանն ու դատադրմանը, Հայաստանը այն դիտարկում է ոչ

միայն դասմական արդարության վերականգնման, այլև տարածաշրջանում փոխադարձ վստահության նընդուրքի ձևավորման և աղագյում նման ոճիրների կանխարգելման համատեսում»:

Սյուս կողմից՝ նոնսենս է, եթե երկու երկրներ քաղաքական հարաբերություններ են հաստատում, բայց դա պայմանավորում են զիտական-ակադեմիական ուսումնասիրություններով:

բ) Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի

Հանրապետության միջև դիվանագիտական
հարաբերություններ հաստատելու մասին արձանագրություն

թ 1. 4-րդ դարերության «տարածային ամրողականություն» բառակապակցությունից հետո ավելացնել «ազգերի ինքնուրուում» բառակապակցությունը: «Երկողմ և բազմակողմ» բառերը փոխարինել «միջազգային» բառով:

Տերապային դարբերակ. Վերահաստատելով հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամրողականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու իրենց երկողմ և բազմակողմ պարտավորությունները:

Առաջարկվող տարբերակ. Վերահաստատելով հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամրողականության, ազգերի ինքնուրուում և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու իրենց միջազգային պարտավորությունները:

Պարզաբանում. Ընդհանրապես դիվանագիտական հարաբերություններ հաստատելու միջազգային պրակտիկան չի ենթադրում երկողմանի փաստաթղթերում այդպիսի ձևակեպումներ: Եւ Հայաստանը, և Թուրքիան ՄԱԿ-ի, Եվրախորհրդի, այլ միջազգային կազմակերպությունների անդամ են, ինչով արդեն որոշակի պարտավորություններ են ստանձնել: Բայց մեր երկու երկրների միջև առկա խնդիրները հասկանալով՝ ոչ քե դեմ ենք ամրող պարբերությանը, այլ ճիշտ ենք համարում ավելացնել նաև ազգերի ինքնորոշման սկզբունքը: Մանավանդ նախորդ արձանագրության 7-րդ պարբերությունը ասում է. «Վերահաստատելով իրենց հանձնառությունը տարածաշրջանային և միջազգա-

յին վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի և նորմերի սկզբունքների հիման վրա»: Իսկ միջազգային իրավունքի սկզբունքներն են՝ ուժի կիրառման բացառումը, տարածքային ամբողջականությունը, ազգերի ինքնորոշումը:

Հայաստանը Թուրքիայի հետ իրավական ուժ ունեցող երկկողմ պարտավորություններ չունի: «Քազմակողմանիք» մասին արդեն վերևում ասեցինք. դրանք երկու երկրները ստանձնել են միջազգային կառույցներին անդամակցելով: Այնպես որ՝ ամբողջովին տրամարանական է «Երկկողմ և բազմակողմ» պարտավորությունները փոխարինել «միջազգային դարտավորություններով»:

թ 2. 6-րդ դարբերությունը՝ «Վերահաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով» ամբողջովին գեղչել:

Պարզաբանում. Նախորդ պարզաբանումը ինչ-որ չափով բացատրում է, թե մենք ինչու ենք առաջարկում այս պարբերությունը ընդհանրապես հանել: Ասենք նաև, որ դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ 1961թ. Վիեննայի կոնվենցիան ևս սահմանների փոխադարձ ճանաչում չի նախատեսում: Այն ենթադրում է միմիայն պետության և կառավարության ճանաչում: Սահմանների որոշման և ճանաչման հարցը բոլորովին այլ ոլորտում է և կարգավորում է սահմանակից երկրների միջև կարգող համապատասխան պայմանագրերով: Այս արձանագրությունը չի կարող փոխարինել այդ պայմանագրին: Աշխարհում գոյություն ունեն դիվանագիտական հարաբերություններ ունեցող տասնյակ երկրներ, որոնք սահմանի ճանաչմանը չեն անդրադարձել: Մենք էլ կարող ենք նույն կերպ վարվել: Նախորդ ծևակերպումները գոյություն ունեցող սահմանի հարցը լուծում են: Բայց մենք չպետք է մեզ զրկենք պատմական արդարությանը հետամուտ լինելու իրավունքից:

թ 3. 7-րդ դարբերությունը վերաշարադրել. «Կարևորելով ընդհանուր սահմանը բացելու որոշումը»:

Տեքստային լրարերակ. Կարևորելով իրենց որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը:

Առաջարկվող swrpbewaկ. Կարևորելով ընդհանուր սահմանը բացելու որոշումը:

Պարզաբանում. Այս կետի տեքստային ձևակերպումը տպավորություն է բողնում՝ ասես Հայաստանն ու Թուրքիան հավասարապես մեղավոր են, որ սահմանը փակ է, և Թուրքիան չէ, որ միջազգային իրավունքի բոլոր նորմերն ու պարտավորությունները խախտելով, շրջափակման է ենթարկել Հայաստանը: Եթե դատապարտող ոչինչ չկա, գոնք այսպես ձևակերպինք, որ Հայաստանը շրջափակողի հետ նույն կարգավիճակի մեջ չհայտնվի:

գ) Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի

Հանրապետության միջև երկողմ հարաբերությունների զարգացման մասին Արձանագրության իրազործման ժամանակացույց և swrrter

գ 1. Վերնագրում «զարգացման» բառը փոխարինել «բարելավման» բառով:

գ 2. 5-րդ կետում «Գիտություն և կրթություն» բառերը փոխարինել «գիտության, կրթության և մշակույթի» բառերով:

Պարզաբանում. Կարծում ենք՝ այս ենթահանձնաժողովը պետք է զբաղվի ոչ միայն գիտության և կրթության ոլորտներով, այլև՝ մշակութային արժեքներով ու պատմական հուշարձանների ճակատագրով:

գ 3. Վերջին դարբերությունը վերաշարադրել հետևյալ ձևակերպմամբ.

«Երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացման ենթահանձնաժողով»:

Տերզային դարբերակ. -պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողով /երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացում, այդ թվում՝ պատմական փաստարդերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար/՝ հայ, բուրք, ինչպես նաև շվեյցարացի և այլ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

Առաջարկվող surpերակ. -Երկու ժողովուրդների միջև փոխավոտահության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացման ենթահանձնաժողով:

Պարզաբանում. Չի կարելի քույլ տալ, որ Թուրքիան հնարավորություն ստանա շահարկել այս ենթահանձնախմբի գոյությունը՝ շարունակելով ուրացման քաղաքականությունը և մոլորեցնելով միջազգային հանրությանը: Ցեղասպանությունը իրողություն է: Հայաստանը այսօր Թուրքիայի առաջ նախապայման չի դնում այն ճանաչելու, քայլ և չի կարող հարցականների դուռ քացել: Աշխարհի 20 երկրներ, քազմաքիվ միջազգային կազմակերպություններ ճանաչել են այն, այս թեմայով գիտական, անկողմնակալ ուսումնասիրությունների ժամանակը վաղուց անցյալում: Այս խնդրի վերաբերյալ Հայաստանի ուազմավարությունը հստակ ձևակերպված է ազգային անվտանգության հայեցակարգում: Տես՝ նաև ա3. քացատրությունը: